

ԱՍԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԶՕՐ ԾՆՆՆԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԲԻԹՎԵԶԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

ԺՌՂՈՎՈՐԴ ԼԱՅՈՑ ՈՐ ՅԵՐՈՒՍԱԼԷՄ, Ի ԼԱՅԱՍԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Կը խօսիմ ձեզի նորէն աշխարհի ամենանուիրական Մրբավայրէն, Բեթղեհէմի մեր Տիրոջ Ծննդեան Այրէն, փոխանցելու հարցը աւետիար այս գիշերուան՝ որ երկու հազար տարիներ առաջ աշխարհի տուեցաւ հրեշտակներու եւ հովիւներու բերնով:

Մեր Տիրոջ ծնունդը սրտառուց եւ զեղեցիկ դրուագ մը չէ միայն, մին անոնցմէ՝ որոնք յանախ յուզիչ եւ մեծ յիշատակներով կը հարստացնեն կեանքը, այլ սկիզբը նոր կարգի մը՝ մարդկային պատմութեան մէջ:

Մարդուն կեանքը, շնորհիւ այս յայտնութեան, կը ոտանայ նոր նշան-

Հայաստանեայց Եկեղեցին եւ մենք՝ բոլոր հայերս, որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի, առաւելապէս պէտք է աղօթենք ու գործենք խաղաղութեան դասի յաղթանակի համար, որովհետեւ բազում դարեր շարունակ ծանրորէն ապրել կեն որբերգութիւնները վայրագ արեւանքներէ, բռնակալ տիրապետողներէ եւ յանախ զանգուածային կոտորածներէ: Ապրել ենք անաւոր ազգային աղէտը 1915ի ցեղաւայանութեան: Այո՛, մենք հայերս չպէտք է մոռանանք անցեալի դառն փորձառութիւններն ու մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը: Առաւել քան այլ ազգեր պարտաւոր ենք իսկ եւ զիշտ աղօթել ու անյոգնաբեկ գործել եղբայրական ժողովուրդներէ եւ խաղաղաւոր ուժերի հետ, ի խնդիր տեսնային ռուսներէ արգելման, ի խնդիր միջազգային լարածութեան թուլացման՝ արդարութեան լոյսի սակ: Անկախ եւ վեր աւելն հասածական դիրքաւորումներէ կամ գաղափարախօսական նկատումներէ, ամէն հայ մարդ, ուր որ գտնուի աշխարհում, պարտաւոր է պատշապանը հանդիսանալու միջազգային խաղաղ գոյավիճակի, միշտ մտահոգուած արդի մեր վերածնունդ Մայր Հայրենիքի նակատագրով:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

նակութիւն. Ասուած կը մասնակցէր մարդուն պատմութեան եւ կը լեցունէ բացը՝ որ կար հոգիին եւ մարմնին, երկրին ու երկնին միջեւ: Ծննդեան գերագոյն նշանակութիւնը կը կայանայ Ասուծոյ հայրութեան եւ մարդուն որդիութեանը մէջ: Ծնունդը մարդուն եւ Ասուծոյ եղանակի հանդիպման, աւելի պակեալուոր բացատրութեամբ՝ կորուած որդիին եւ Հօրը վերագիւսին տունն է:

Մանուկը որ այսօր վերսին իր խանձարուրը կը բանայ այս սրբազան Այրէն եւ մեր հոգիներէն ներս, խորհուրդն ու մարմնառութիւնն է սիրոյ, խաղաղութեան, բայց մանաւանդ արդարութեան՝ որ ըզձանձնն ու կարօսն է եղած դարերով սառապող սերունդներուն, պատմութեան մութ եւ արիւնոտ ծիպանքներուն դիմաց:

Դաբերով գերի եւ սակաւաթիւ ազգերու կանչն է եղած այն կտոր մը արդարութիւնը, զայն խորհրդանշող կեիտքը իրենց ձեռքին մէջ բռնող հզօրներէն: Արդարութիւնը աղն է կեանքին եւ հիմնաքարը ընկերութեան, ինչպէս նաեւ Ասուծոյ թագաւորութեան յեւականացման եւ արդիւնաւորման: Արդարութեան յղացքը անուշտ դիւրին սարագելի գաղափար մը չէ, որքան ասէն որ մեր աշխարհի մէջ մէկուն արդարութիւնը կը յանգի յանախ ուրիշի հանդէպ գործադրուած անարդարութեան: Ճամբիսը հանչնալու եւ զայն անփոփոխ արձայայտելու ներքին ձգտումն է արդարութիւնը, որ կը բարձրացնէ ազգերը իրաւունքի եւ պարտքի վերաբերմամբ, զէն կը պահէ ժողովուրդները, ըլլալով մարդկային կեանքի ամենէն շինիչ ուժերուն արդիւնն ու ներշնչարանը, թուառութեանց ամենաբոյժ ամոքիչը, քաջութեան պահպանակը եւ առաքինութիւններու դրդիչը:

Արդարութեան քաղցն ու ծարաւը ունեցողները ազնուական հոգիներ են, իսկ անոր համար հալածանք եւ նեղութիւն յանձն առնողները՝ հերոսներ: Կը հալածուին՝ սակայն երջանիկ են, վասնզի կը զգան թէ հեմարիտ է իրենց դասը: Անոնք կը տեսնեն մարդկութեան արեւոտ վաղը, իրականութեան մօտեցած երազը, եւ կը վորձեն մօտեցնել զայն մեզի:

Հարսութիւն եւ զինուորական փառք արհամարհելի չեն անուշտ, սակայն բաւական չեն ապահովելու ժողովուրդներու տեսականութիւնը, եթէ անոնց պակաս արդարութեան զգացումը: Ըսուած է ընել ուրիշին՝ ինչ որ պիտի ուզէինք որ ուրիշը ընէր մեզի, եւ չառնել ուրիշներէն՝ ինչ որ զինք չէ ելած մեր ֆրսիքին: Նման աշխարհ մը ոչ երազ է եւ ոչ ցնորք. անոր խանձարուրը Յիսուս բացած է արդէն: Մարդոց կը մնայ այդ մանուկը չմոռցնել:

Ինչ փոք թէ միլիոնաւոր մարդեր տակաւին ունեցած չըլլան, յանուն արդարութեան, իրենց իրաւունքը եղող այդ կտոր մը քարիքը այս աշխարհէն: Այս գիշեր բոլոր երկիրներու եւ հոգիներու հորիզոնին վրայ նորէն կը տոյգայ Արդարութեան Իւթանին աստղը: Կը հաւասանք թէ մօտ է օրը՝ երբ ան պիտի

նշուի նաեւ մեր երկնակամարին վրայ, մեր բոլորին բերելու իր դարաւոր իդէներուն, երազներուն եւ ձգտումներուն գրաւական եղող արդարութիւնը:

Մեր խորունկ հաւաստիքն է եղած դարերով, որ ամէն զոհողութիւն, ուր կամ կանուխ, իւր արժանի հասուցումը կ'ունենայ: Թէ Աստուծոյ արդար արեւին ներքեւ այնքան վայրագօրէն նահասակուած մեր երազը, կարճա՛մ մեր զոհներուն արիւնով, որ մը պիտի իրականանայ, որովհետեւ երազները չեն մեռնիր երբ արիւնով են գրուած: Մեր անբիւ նահասակներուն սրբազան կտակն է ան, որ այսօր եւս կը շարունակուի մեր այս անարդար եւ դաւաճան աշխարհին մէջ: Սակայն մեռելները չեն ապրիր երբ մեռնի երազը, եւ ռոջերը կը դադրին իրենց դերէն՝ երբ մեռելները լռեն: Մեր հոգիներուն մէջ պէ՛տ է հնչել ձայնը այդ նահասակներուն, որոնք դարերով իրենց կորնչական մարմինները յանձնեցին ռիտին, առանց յանձնելու սակայն անմահութիւնը իրենց հոգիներուն եւ երազներուն: Մեր գերազոյն պէ՛տքը անոնց աննուան կենդանութիւնն է գերեզմանէն անդին: Թող զան մեզի նորէն անսք, իրենց բոլոր կասաղութիւններուն, վէճներուն կարմիր ու կրակէ օձերովը. մենք պէ՛տք ունինք անոնց օղակներուն՝ խեղդելու համար թեւամին:

Թող զան մեզի նորէն արդարութեան շունչով լեցուած այս գիշերով, իրենց արիւններուն նախասինովը եւ աստուածային բարձրութեան նետուած թուներովը, որովհետեւ զանոնք աննիւթ ձեռքը նորէն կը հօծէ իր մերկ ետքադանը սփիւռփի մեր մնացորդացին դէմ: Մօտ է օրը քաւութեան, սորվեցուցէ՛ք մեզի անձնուիրութիւնը՝ որ կրկնապէս զմայլելի դարձաւ ձեզմով, քանի որ ձեր արիւնին միւռոնը ապառաժներուն եւ աւազներուն վրայ թափեցաւ:

Ժողովուրդ Հայոց, զուն դարերով արդարութեան եւ ազատութեան շենչն եւ ունեցեք, երկնին չափ խորունկ եւ ոսկի անուրջի մը պէս գեղեցիկ: Այդ զգացումը ճարճա՛մ եւ վերացական յղացք մը չէ եղած քեզի համար, այլ ջիղերով զգալի մարմնացած հետ մը, սլացք մը, քու ըզմանքի թափին մէջ երկնքի դուռները եւ արդարութեան դարպասները խորակելու չափ: Վստահ ենք թէ ի լուր մեր պատմութեան եւ խղճմանքի մութ քարայրներէն հասող այդ կանչին, ամէն հայ պիտի զգայ մաս մը իր հոգիէն, նման այն ախտեալին՝ որ կը սարսուայ երբ կը լսէ իր հեռաւոր հայրենիքին մէջ երգը:

Իմ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սիրտը քեզի է որ կը բացուի նորէն, ժողովուրդ Հայոց, նուիրական այս գիշերով, եւ կեցած Սուրբ Ծննդեան այս վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցենք աւետար՛ զոր օր մը հովիւները եւ հրեւեակները ռուին աշխարհին: Մեզի հետ միասին այս գիշեր ձեր երկիւղած էութեան խորէն անզամ մը եւս աղօթեցէ՛ք որ փարատին մառախուղները, չհանան չարիքները եւ լինի արդարութիւն բոլոր ազգերուն. ամէն:

19 Յունուար 1983